

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի Փոքր Սարիարի միջնակարգ դպրոցի անգլերեն լեզվի ուսուցչի թափուր տեղի համար:

Անգլերենի ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման/16դ/ժ/:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվում է 2 փուլով՝ գրավոր և բանավոր: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է :
2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հաստատող ավարտական փաստաթուղթ դիպլոմ, կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից:
3. Անձնագրի պատճենը:
4. Ինքնակենսագրություն:
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարում հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի:
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացվեն բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետ սահմանվում է 2018 թվականի Դեկտեմբերի 4-ը ներառյալ, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10<sup>00</sup>-ից մինչև 15<sup>00</sup>:

Մրցույթն անցկացվելու է 2018 թվականի Դեկտեմբերի 7-ին ժամը 12<sup>00</sup>-ին , Փոքր Սարիարի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Շիրակի մարզ, գյուղ Փոքր Սարիար:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ( 093) 62-67-71 , (094)626771 հեռախոսահամարներով: